

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2013 թվականի մայիսի 30-ի թիվ 8 նիստի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ
ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 30-րդ կետի 12-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 12-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թվականների համալիր միջոցառումների ծրագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2013 թ. ՄԱՅԻՍԻ 30-Ի ՆԻՍՏՈՒՄ

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2013-2014 թթ.

ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ներածություն

Վերջին տարիների ընթացքում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը ԵՊՀ-ում ստացել է առաջնային խնդրի կարգավիճակ և կարևորվում է համալսարանական ղեկավար մարմինների կողմից:

2009 թ. դեկտեմբերի 25-ին ԵՊՀ խորհրդի կողմից հաստատված «ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014 թթ.)» ընթացիկ գերակայությունների շարքում հատուկ նախատեսված է առանձին խնդիր՝ նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և այդ համատեքստում նպաստել համալսարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 30.12.2010 թ. N 1806-Ա/Ք հրամանով հաստատվեց «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի՝ 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագիրը»: ԵՊՀ ռեկտորի 30.11.2010 թ. հրամանով ձևավորվեց կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը համակարգող հանձնաժողով, որը պետք է ապահովեր ԵՊՀ-ում այս ծրագրի իրագործումը. միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում: 2011 թ. մարտի 31-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվեց «Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը (2011-2012 թթ.)»: Հաստատված ծրագիրն ընդլայնեց ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված գործողությունները և սահմանեց մի շարք ուղղություններով գործողությունների պլան: Երկամյա ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների մասին հաշվետվությունները ներկայացվել են ԵՊՀ գիտական խորհրդին և ԵՊՀ խորհրդին:

Հարկ է նշել, որ բուհական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարն իր բնույթով բավական բարդ գործընթաց է, ներառում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հիմնախնդիրներ՝ միաժամանակ փոխկապակցված լինելով մի շարք այլ, բարձրագույն կրթության հետ չառնչվող, հիմնահարցերի հետ: 2011-2012 թթ. ընթացքում ԵՊՀ-ում իրականացված կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը համալսարանական միջավայրում առաջին նմանօրինակ փորձն էր և ձեռքբերված արդյունքը կարելի է համարել բավարար (ծրագիրը և դրա կատարողականը տեղադրված են ԵՊՀ պաշտոնական կայքում):

Այդուհանդերձ, նպատակ ունենալով իրագործել ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթները և ապահովել վերոհիշյալ աշխատանքների շարունակականությունը, ԵՊՀ ռեկտորի 22.02.13 թ. հրամանով ստեղծված ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովը մշակել է ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014

թթ. համալիր միջոցառումների ծրագիր (այսուհետև՝ Ծրագիր): Նշված ծրագիրը ապահովում է 2011 թ. մարտի 31-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրով նախանշված աշխատանքների շարունակական բնույթը և հիմնված է այդ ծրագրի իրականացման ըթացքում ԵՊՀ-ի կողմից ձեռք բերված դրական փորձի վրա: **Միաժամանակ հարկ է նշել, որ ծրագրի արդյունավետությունը կախված է համալսարանականների ակտիվ մասնակցությունից, համալսարանի կոլեկտիվի անդամների կողմից խնդրի կարևորության գիտակցումից և համագործակցությունից:**

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակներ են.

- առավել նպատակային, արդյունավետ և համակարգված դարձնել հակակոռուպցիոն միջոցառումները ԵՊՀ-ում, ապահովել հակակոռուպցիոն միջոցառումների շարունակականությունը,
- ապահովել համալսարանականների լայն շրջանակների մասնակցությունը հակակոռուպցիոն միջոցառումների իրականացմանը,
- նպաստել համալսարանականների շրջանում կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտի ձևավորմանը,
- բարձրացնել հակակոռուպցիոն միջոցառումների մոնիթորինգի արդյունավետությունը, իրականացվող աշխատանքների հրապարակայնությունն ու հաշվետվողականությունը:

Հակակոռուպցիոն միջոցառումների շրջանակը

ԵՊՀ-ում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա/ ուղղակի միջոցառումներ.

Այս խմբին են պատկանում բոլոր այն միջոցառումները, որոնք ուղղակիորեն առնչվում են հակակոռուպցիոն խնդիրներին՝ իրազեկվածության մակարդակի բարձրացում, քարոզչական աշխատանքներ, քննությունների գործընթացի և վարչական տարբեր գործողությունների վերահսկողության մեխանիզմների զարգացում, աշխատանքների արդյունավետության մոնիթորինգ, աշխատակիցների վերապատրաստում և այլն:

բ/ անուղղակի միջոցառումներ.

Այս խմբին են պատկանում բոլոր այն միջոցառումներն ու աշխատանքները, որոնք իրականացվում են այլ հիմնախնդիրների լուծման նպատակով, սակայն միաժամանակ կարող են զգալի հակակոռուպցիոն ազդեցություն ունենալ: Այս միջոցառումների թվին են դասվում կրթության որակի բարձրացմանը, հանրային կապերի զարգացմանը, կադրային քաղաքականությանը, տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, ուսանողական ինքնավարության ընդլայնմանը և մի շարք այլ հարցերին վերաբերող աշխատանքներ:

Սույն ծրագիրը ներառում է ուղղակի և անուղղակի այն բոլոր միջոցառումները, որոնք ըստ ծրագրի հեղինակների կարող են հակակոռուպցիոն շոշափելի ազդեցություն ապահովել:

Հիմնական կոռուպցիոն ռիսկերը (կոռուպցիայի դրսևորումները) և հակակոռուպցիոն միջոցառումների ուղղությունները

ԵՊՀ-ում առկա կոռուպցիոն ռիսկերը կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ հիմնական խմբերի.

- **Գիտելիքի գնահատում.** սովորողի գիտելիքի ոչ օբյեկտիվ գնահատում (դրամի, նյութական բարիքների, ծառայությունների դիմաց կամ միջնորդի օգնությամբ գնահատականի նշանակում և այլն),
- **Մուտք դեպի կրթական համակարգ.** բուհի կողմից իրականացվող ընդունելության գործընթացում դրսևորվող ոչ օբյեկտիվ մոտեցումներ,
- **Ուսանողի շարժունակություն.** ուսանողների տեղափոխումների, փոխանակումների, հեռացումների, վերականգնումների և այլ խնդիրների հետ կապված ոչ օբյեկտիվ մոտեցումներ,
- **Անձնակազմի կառավարում.** ԵՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, պաշտոնական առաջխաղացման, վարչական վերահսկողության, մասնագիտական աճի և այլ խնդիրների հետ կապված ոչ իրավաչափ դրսևորումներ:
- **Համալսարանի ֆինանսական կառավարում.** գնումների գործընթացի կազմակերպման և այլ գործառույթների ոչ իրավաչափ իրականացում,
- **Համալսարանի տնտեսական կառավարում.** տնտեսական և օժանդակ ենթակառույցների շահագործման գործընթացների ոչ իրավաչափ իրականացում:

Համակոորուպցիոն հիմնական միջոցառումներ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնց իրականացման համար հանձնաժողովի կողմից կսահմանվեն ժամկետներ և պատաստանատուներ (հանձնաժողովի անդամներ), որոնք ԵՊՀ հակակոորուպցիոն միջոցառումների համակարգող հանձնաժողովի հաստատմանը պետք է ներկայացնեն այդ միջոցառումների իրականացման տարեկան աշխատանքային պլանները:

Սույն ծրագրով նախատեսվում են հետևյալ հիմնական միջոցառումները.

<i>N</i>	<i>Միջոցառման անվանում</i>	<i>Իրականացվող աշխատանքներ և ակնկալվող արդյունքներ</i>
1.	Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացում հնարավոր կոորուպցիոն ռիսկերի նվազեցում	<ul style="list-style-type: none"> - ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգով և այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերի պահպանման նկատմամբ հսկողության ուժեղացում, - գնահատման գործընթացի, այդ թվում բողոքարկման կատարելագործում, գործող կարգերի վերանայում, - գիտելիքի գնահատման արդյունքների բողոքարկման մեխանիզմների կատարելագործում, բողոքարկումների արդյունավետության բարձրացում:
2.	Կոորուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտի ձևավորում	<ul style="list-style-type: none"> - քարոզչական տարբեր միջոցառումների, հանդիպումների, քննարկումների իրականացում, - ուսանողների շրջանում գիտելիքի արժևորում և նրանց մեջ «կոորուպցիոն ճանապարհով գնահատական վաստակելու» երևույթի նկատմամբ խիստ բացասական վերաբերմունքի արմատավորում, - տարբեր քարոզչական նյութերի (այդ թվում նաև էլեկտրոնային) մշակում և տարածում:
3.	Համալսարանականների իրազեկվածության մակարդակի բարձրացում	<ul style="list-style-type: none"> - համալսարանի գործունեությունը կանոնակարգող տարբեր իրավական ակտերի, ներբուհական կարգերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, - իրավական ակտերի հասանելիության աստիճանի բարձրացում, դրանցից օգտվելու

		հմտությունների զարգացում:
4.	ԵՊՀ հեղինակության և մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում	<ul style="list-style-type: none"> - «ԵՊՀ-ն հանրապետության առաջատար բուհ» քարոզչական միջոցառումների իրականացում, - մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ, - ԵՊՀ-ում ստացված կրթությունից ուսանողների բավարարվածության և մրցունակության աստիճանի բարձրացում:
5.	Կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում	<ul style="list-style-type: none"> - կրթական ծրագրերի բովանդակության, առարկայական ծրագրերի, հարցաշարերի, գրականության և այլ նյութերի հասանելիության ապահովում, - քննական գործընթացի արդյունքների հրապարակման միջոցառումների հետևողական իրականացում, - տեղափոխումների, հեռացումների, փոխանակումների և այլ վարչական գործընթացների հրապարակայնության ապահովում:
6.	Կոռուպցիոն ռիսկեր պարունակող ներբուհական իրավական ակտերի կատարելագործում	<ul style="list-style-type: none"> - ընդունված ներքին իրավական ակտերի կիրառման արդյունավետության և բացահայտված թերությունների մշտական մոնիթորինգ ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդներում, - գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների իրականացում, - ուսանողների կողմից տարբեր խնդիրներով վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի մշակում և գործուն մեխանիզմների ներդրում:
7.	Համալսարանում իրականացվող ընդունելության գործընթացի վերահսկողություն	<ul style="list-style-type: none"> - սահմանված ընթացակարգերի պահպանմանն ուղղված վերահսկողության իրականացում, վերահսկողության նոր մեխանիզմների մշակում և ներդրում:
8.	Հակակոռուպցիոն միջոցառումներում ուսանողների մասնակցության խթանում	<ul style="list-style-type: none"> - ուսանողական կառույցների կարողությունների զարգացում, - ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում, - հակակոռուպցիոն ծրագրերում ուսանողների հաջողված փորձի ներկայացում
9.	Համալսարանում	<ul style="list-style-type: none"> - պաշտոնների տեղակալման կանոնակարգերով համապատասխան մրցույթների

	կառավարման գործընթացի կատարելագործում	<p>իրականացում, մրցույթներում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցում, մրցակցային գործընթացի խրախուսում,</p> <ul style="list-style-type: none"> - վարչական և այլ պաշտոնների աշխատանքների նկարագրության և զբաղեցրած պաշտոնի համապատասխանությունը ապահովող համակարգի ներդրում, - օրենսդրությամբ սահմանված գնումների գործընթացի իրականացում և հրապարակայնության ապահովում, - ֆինանսական կառավարման, ենթակառուցվածքների աշխատանքների հաշվետվողականության բարձրացում, - ստորաբաժանումների աշխատանքի պլանավորման, հաշվետվողականության և գնահատման համակարգերի մշակմանը և ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում, - ներհամալսարանական կառավարման ընթացակարգերի կատարելագործմանն ու էլեկտրոնային կառավարման և փաստաթղթաշրջանառության համակարգերի զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացում:
10.	Հակակոռուպցիոն միջոցառումների միջազգային առաջատար փորձի ուսումնասիրություն և տեղայնացում	<ul style="list-style-type: none"> - հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման գործընթացում առաջատար միջազգային փորձի կիրառում՝ տարբեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, - սեմինարների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների իրականացում:
11.	Հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքների մոնիթորինգ, ուսանողների հետ հետադարձ կապի ապահովում	<ul style="list-style-type: none"> - Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական և ԵՊՀ-ում ստացված կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումների իրականացում, դրանց կատարելագործում, - ուսանողների շրջանում տարբեր հարցումների իրականացում, այդ թվում՝ ուսանողական կառույցների կողմից և անկախ կազմակերպությունների ներգրավմամբ, - առցանց գործիքների զարգացում: